



ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՆԱԶԱՊԵՏԱՐԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

2018

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱԶԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՐԱԾԱՆԿԱԿԱՆԱԾՈՒԹՅԱՆ
ԿԱԿՈՏՈՒՆԻ ԿԱՆԴԱԶՄԱՆՈՒԹՅԱՆ

ԿՏԻՈՒ ՂԻԿՈՏԱՄԻՒ
(ՂԵՐԿԱՆՈՒՄԻ ՆՈՒՃԱՄԵՆՈՒՄ)
(Լիսի) ԽՈՒՄԻՆԱԿԱՆ ՊՐՈԳՆՈՒՄ



Ց Ա Ն Կ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԿՈՂ ՔԱՂԱՔԱՇԽՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ

h/h	Գործող ընթացակարգերի շրջանակում կառուցապատողներին տրվող քաղաքաշինական փաստաթղթի անվանումը	Կառուցապատվող օբյեկտի համար տրվող փաստաթղթերի ժամկետներ (օր), այդ թվում՝				
		Ցածր շինարարության օբյեկտներ (I կատեգորիա)	Միջին շինարարության օբյեկտներ (II կատեգորիա)	Միջինից բարձր շինարարության օբյեկտներ (III կատեգորիա)	Բարձր շինարարության օբյեկտներ (IV կատեգորիա)	Բարձրագույն շինարարության օբյեկտներ (V կատեգորիա)
1.	Նախագծման թույլտվության (Ճարտարապետա- հատակագծային առաջադրանքի) տրամադրում, այդ թվում՝	Որևէ քաղաքաշինական փաստաթուղթ չի պահանջվում	10	15	20	20
1.1	<u>Տեխնիկական պայմանի տրամադրում</u> (համապատաս- խան մատակարար կազմակերպություններին դիմելու գործառույթը վերապահված է Երևանի քաղաքապետարանին)		5	10	15	15
2.	Նախքան համաձայնեցման ներկայացնելը կառուցապա- տողի կողմից նախագծի համար պահանջվող քաղաքաշինական փորձաքննության ձեռք բերում		Նախագծողի երաշխավորագիր	Պարզ փորձաքննություն	Պետական համալիր փորձաքննություն	Հատուկ համալիր փորձաքննություն
3.	Շինարարության (և/կամ քանդման) թույլտվության տրամադրում և միաժամանակ նախագծի համաձայնեցում		5	10	15	15
4.	Ավարտական ակտի (Շահագործման թույլտվության) ձևակերպում (4.1+ 4.2), այդ թվում՝		8	8	10	10
4.1	<u>Համապատասխան դիմումի հիման վրա՝ ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովում ներկայացուցչի թեկնածության առաջադրում</u>		5	5	5	5
4.2	<u>Ընդունող հանձնաժողովի միջոցով կառուցապատողի կողմից օբյեկտը շահագործման ընդունելուց հետո համապատասխան դիմումի հիման վրա ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպում</u>		3	3	5	5
ԱՄԲՈՂԶ ԳՈՐԾՆԹԱՋՑԻ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ /1+3+4/ ՕՐԵՐՈՎ		—	23	33	45	45



Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման ընթացակարգերը, ժամկետները և դրանց հետ փոխկապակցված գործառույթներն ունեն որոշակի տարբերություն՝ կախված կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանից:

Շինարարության օբյեկտները, ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հետևյալ կատեգորիաների:

I կատեգորիա ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ (շինարարության թույլտվություն չպահանջող)



Ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների:

II կատեգորիա միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտներ



Միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտների թվին են դասվում այն փոքրածավալ շինարարական օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը փոխարինվում է նախագծող կազմակերպության երաշխավորագրով, իսկ շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝ շինարարական կազմակերպության երաշխավորագրով:

III կատեգորիա միջինից բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ

Միջինից բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտների թվին են դասվում II և IV կատեգորիաների ռիսկայնության օբյեկտների միջակայքում բնութագրող ցուցանիշներ ունեցող օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են պարզ փորձաքննության:

IV կատեգորիա բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ



Բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտների թվին են դասվում հատուկ և կարևորագույն նշանակություն ունեցող շինարարական օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են պետական համալիր փորձաքննության՝ ներառյալ օրենքով սահմանված պետական լիազորված մարմինների փորձաքննությունները կամ մասնագիտական եզրակացությունները:

V կատեգորիա բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտներ

Բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտների թվին են դասվում հատկապես վտանգավոր և (կամ) տեխնիկապես բարդ, ինչպես նաև երկու և ավելի պետությունների շահերին առնչվող քաղաքաշինական (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ նշանակության) օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են հատուկ համալիր փորձաքննության և որոնց կառուցապատման թույլտվությունների տրամադրման պայմանները և ժամկետները յուրաքանչյուր առանձին դեպքի համար սահմանվում են ՀՀ կառավարության որոշմամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ռիսկայնության աստիճանի օբյեկտների ու դրանց բնութագրի մասին ամբողջական տեղեկություն կարելի է ստանալ՝ նշված «QR» կոդերը ներբեռնելով կամ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական՝ www.yerevan.am կայքի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» և «Doing Business» բաժիններում տեղադրված համապատասխան ցանկից:

ՀՀ օրենսդրությամբ թույլատրվող որոշակի շինարարական աշխատանք իրականացնելու համար անհրաժեշտ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) ստանալու համար կառուցապատողը պետք է ունենա պետական գրանցում ստացած հողատարածք կամ այլ անշարժ գույք:

Հայտատուի պահանջով և ինժեներական ենթակառուցվածքի փոփոխության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նախագծման թույլտվության հետ միաժամանակ Երևանի քաղաքապետարանը կառուցապատողին անվճար տրամադրում է նաև մատակարար կազմակերպությունների կողմից տրված համապատասխան տեխնիկական պայմանները:

Նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը), շինարարական օբյեկտի ռիսկայնության աստիճանից կախված, ունի 1-2 տարվա գործողության ժամկետ, որի ընթացքում կառուցապատողը պետք է պատվիրի ճարտարապետաշինարարական նախագիծ ու դիմի Երևանի քաղաքապետարան՝ այդ նախագծի համաձայնեցման և համապատասխան շինարարության թույլտվություն ստանալու համար:

Շինարարական օբյեկտի ռիսկայնության աստիճանից ու բարդությունից կախված՝ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի փորձաքննությունները լինում են տարբեր (մասնավորապես՝ նախագծողի Երաշխավորագիր, Պարզ, Պետական համալիր և Հատուկ համալիր փորձաքննություններ):

Ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցումն ու շինարարության թույլտվության տրամադրումը կատարվում է միաժամանակ՝ կառուցապատողի կողմից ներկայացված մեկ դիմումի հիման վրա:

Կախված նախատեսվող քաղաքաշինական գործընթացի առանձնահատկությունից կամ անշարժ գույքի սեփականատիրոջ հայեցողությունից, մինչև շինարարությունը սկսելը կարող է տրամադրվել առանձին Քանդման թույլտվություն, որի տրամադրման, գործողության ժամկետների ու այլ պահանջների վրա նույնպես տարածվում են շինարարության թույլտվությունների համար սահմանված բոլոր պահանջները:

Ցանկացած շինարարության կամ քանդման թույլտվություն ունի ժամկետ, որը ներառում է շինարարական բոլոր աշխատանքների իրականացման և ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպման համար անհրաժեշտ գործընթացի կազմակերպման ժամկետները:

Շինարարական կամ քանդման աշխատանքը սկսելուց առնվազն 3 օր առաջ կառուցապատողը պետք է սահմանված ձևաթղթով Երևանի քաղաքապետարան՝ ներկայացնի համապատասխան տեղեկատվություն, իսկ դրա չներկայացնելը հանդիսանում է հիմք տրված թույլտվության գործողությունը ժամանակավորապես կասեցնելու համար:

Շինարարության կամ Քանդման թույլտվությամբ նախատեսված ժամկետի կեսը լրանալու դեպքում շինարարական աշխատանքները չսկսելը՝ հիմք է տրված թույլտվությունը Երևանի քաղաքապետարանի կողմից ուժը կորցրած ճանաչելու համար, իսկ այն վերսկսելու վերաբերյալ դիմում ներկայացնելու դեպքում սահմանված ընթացակարգով կառուցապատողին կտրամադրվի նոր թույլտվություն:

Շինարարության կամ Քանդման թույլտվությամբ նախատեսված ժամկետում շինարարական աշխատանքները չավարտելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն, այդ թվում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված վարչական տուգանք:



Շինարարության կամ Քանդման թույլտվությամբ նախատեսված ողջ ժամկետում կառուցապատողը պետք է ապահովի շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը և կառուցապատվող օբյեկտին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունների հրազեկումը՝ ցուցատախտակի միջոցով: Այս պահանջները չպահպանելու դեպքում կառուցապատողները ենթարկվում են պատասխանատվության՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված կարգով:

Եթե նախագծման թույլտվությունը կամ շինարարության թույլտվությունը ստանալուց հետո կառուցապատողն իր հողամասի կամ շինության /այդ թվում՝ անավարտ կառույցի/ նկատմամբ իրավունքները փոխանցում կամ օտարում է այլ անձի, ապա քաղաքաշինական թույլտվություններով սահմանված բոլոր իրավունքների ու պատասխանատվությունների կրողը դառնում է նոր սեփականատերը /կամ օգտագործողը/:

Քաղաքաշինական գործունեության հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

Ճարտարապետաշինարարական նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների ավարտից հետո կառուցապատողը պետք է ձևավորի ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով (որում պետք է ներգրավել նաև Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչին) ու ավարտված օբյեկտն ընդունի շահագործման:

Ընդունող հանձնաժողովի աշխատանքներն ավարտելուց հետո կառուցապատողը դիմում է ներկայացնում Երևանի քաղաքապետարան, որի հիման վրա ձևակերպվում է միաժամանակ տրամադրվող Ավարտական ակտ և Շահագործման թույլտվություն:

Նշված փաստաթուղթը ստանալուց հետո անհրաժեշտ է դիմել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային գրասենյակ՝ անշարժ գույքի համապատասխան պետական գրանցում կատարելու համար:


Կառուցապատողի հայեցողության և շինարարության թույլտվությամբ սահմանված հատուկ պայմանի առկայության դեպքում բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի համար կարող են Ավարտական ակտը և Շահագործման թույլտվությունը ձևակերպվել առանձին-առանձին:

Այս իրավունքը հնարավորություն կընձեռի կառուցապատողին նախ՝ Ավարտական ակտի հիմքով ապահովել շենքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն ու կատարել տարածքների օտարման գործարքներ: Դրան զուգահեռ՝ շինարարության թույլտվությունում նշված լրացուցիչ ժամկետում իրականացնել շենքի ինժեներական գծերի մոնտաժման, տեխնոլոգիական սարքավորումների տեղադրման ու ընդհանուր օգտագործման տարածքների հարդարման բոլոր աշխատանքները, որոնց ավարտից հետո Երևանի քաղաքապետարանը կձևակերպի նաև համապատասխան Շահագործման թույլտվությունը:

Ցանկացած քաղաքաշինական փաստաթղթի տրամադրման համար պահանջվող դիմումը և կից փաստաթղթերը Երևանի քաղաքապետարանի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակ մուտքագրվելուց հետո համապատասխան թույլտվությունը կամ այլ փաստաթուղթը կտրամադրվի դիմումատուին այդ գործընթացի համար սահմանված ժամկետներում, որոնք հաշվարկվում են օրացուցային օրերով՝ հայտի մուտքագրման օրվանից սկսած:

Ցանկացած քաղաքաշինական փաստաթղթի տրամադրումը կամ ձևակերպումը Երևանի քաղաքապետարանի կողմից ենթակա է մերժման, եթե դիմումատուն լիարժեք չի ներկայացրել ՀՀ օրենսդրության համապատասխան թույլտվության տրամադրման կամ ձևակերպման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Շինարարության կամ Քանդման թույլտվության տրամադրման, Ավարտական ակտի և Շահագործման թույլտվության ձևակերպման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է որոշակի տեղական տուրքերի ու վճարների գանձում: Դրանց դրույքաչափերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշումներով, որոնք կառուցապատողները պետք է վճարեն Երևան համայնքի բյուջե, իսկ այդ վճարումները հավաստող անդորրագրերը կցնեն Երևանի քաղաքապետարանի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակ մուտքագրվող համապատասխան դիմումներին:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

✓ Կառուցապատման համար անհրաժեշտ թույլտվությունների և այլ փաստաթղթերի ստացման հայտերը կամ դիմումները կարող են ներկայացվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ցանկացած «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակ, որոնք տեղակայված են Երևանի քաղաքապետարանի թվով երկու և բոլոր վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի մասնաշենքերում:

✓ Երևան քաղաքի վարչական տարածքների որոշ գոտիներում ձեղնահարկով երեք հարկանի անհատական բնակելի տների կառուցման կամ վերակառուցման և դրանց օժանդակ կառույցների իրականացման հետ կապված քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրումը (բացառությամբ ավարտական ակտի և շահագործման թույլտվության) Երևան քաղաքի ավագանու 07.05.2010թ. N 107-Ն որոշմամբ պատվիրակվել է վարչական շրջանների ղեկավարներին:

Այդպիսի աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ թույլտվություն ստանալու համար առաջարկվում է համապատասխան հայտերը կամ դիմումները ներկայացնել անմիջապես այդ վարչական շրջանի աշխատակազմի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակ, որով դիմումատուին կնպաստի ակնկալվող թույլտվությունն ավելի արագ ստանալու գործընթացին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինական այն գոտիները, որոնց տարածքում շինարարության թույլտվությունները տրվում են վարչական շրջանների ղեկավարների կողմից, ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների, կարելի է ծանոթանալ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական՝ www.yerevan.am կայքի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» բաժնում:




✓ Նախագծման կամ շինարարության թույլտվությունները և Ավարտական ակտերը (Շահագործման թույլտվությունները) էլեկտրոնային եղանակով ստանալու համար կառուցապատողը (հայտատուին) պետք է էլեկտրոնային հայտը կամ դիմումը մուտքագրի Երևանի քաղաքապետարանի՝ «www.e-permits.am» շինարարության թույլտվությունների ստացման առցանց համակարգի միջոցով, որի արդյունքում Երևանի քաղաքապետարանի կողմից կտրամադրվի համապատասխան փաստաթղթի՝ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված տարբերակը:



Մուտք գործել «www.e-permits.am» համակարգ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒՅԱՆ) ձևակերպման ընթացակարգ (փուլ)



Գործընթացը կարգավորվում է
ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման
Հավելված N1-ով հաստատված կարգի 138-172 կետերով

Ավարտական ակտը

փաստաթուղթ է, որը հավաստում է շենքերի, շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ընդլայնման), ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական աշխատանքների իրականացման ավարտը:

Շահագործման թույլտվությունը

փաստաթուղթ է, որը հավաստում է ավարտված շինարարական օբյեկտի գործառնական նշանակությամբ շահագործման իրավունքը:

Տվյալ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ է իմանալ

Կառուցված շինության (այդ թվում՝ վերակառուցված, վերականգնված, ուժեղացված, արդիականացված, ընդլայնված) շինարարական աշխատանքների իրականացման ավարտը և, ըստ գործառնական նշանակության, շահագործման ընդունումը փաստագրվում են մեկ վարչական ակտով, միաժամանակ տրամադրվող **Ավարտական ակտով և Շահագործման թույլտվությամբ (այսուհետ՝ Ավարտական ակտ):** Ավարտական ակտը Երևանի քաղաքապետարանի կողմից կարող է ձևակերպվել հաստատված նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացվելուց և սահմանված պահանջներին համապատասխան ավարտված շինարարական օբյեկտը կառուցապատողի կողմից ընդունվելուց հետո: Ընդ որում.

- ✓ Կառուցապատողի ցանկությամբ շինարարական համալիրի կազմում ընդգրկված առանձին շենքերի և շինությունների համար կարող է ձևակերպվել առանձին Ավարտական ակտ՝ ըստ դրանց շինարարության ավարտի, եթե, դրանք որպես համալիրի կազմում ընդգրկված օբյեկտներն, ունեն առանձին հաստատված Նախագծային փաստաթղթեր:
- ✓ Ավարտական ակտը, որպես առանձին փաստաթուղթ, կարող է ձևակերպվել միայն բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի դեպքում, եթե այդ շինարարական օբյեկտի համար, կառուցապատողի հայեցողությամբ, անհրաժեշտ է ապահովել անշարժ գույքի կամ դրա ստորաբաժանված գույքային միավորների (բնակարան կամ ոչ բնակելի տարածք) նկատմամբ իրավունքների համապատասխան պետական գրանցում:

Այսպիսի դեպքերում, պետք է Շինարարության թույլտվությունում առանձնացված լինեն Ավարտական ակտի և Շահագործման թույլտվության ձևակերպման ժամկետները և ըստ այդ ժամկետների դրանք տամադրվեն առանձին գործընթացների կազմակերպմամբ (նախ՝ Ավարտական ակտը, իսկ այնուհետև՝ Շահագործման թույլտվությունը), որոնց առանձնահատկությունները նկարագրված են սույն ուղեցույցի առանձին ենթաբաժնում:



ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ) ձևակերպման ընթացակարգ՝ ըստ քայլերի

ՔԱՅԼ I.

Ընդունող հանձնաժողովի անդամների ներգրավում ու ձևավորում

Անհրաժեշտ է Երևանի քաղաքապետարանի «Մեկ պատուհան» գրասենյակ մուտքագրել Ընդունող հանձնաժողովի կազմում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցչին ընդգրկելու համապատասխան դիմում:

Ներբեռնել դիմումի ձևաթուղթը և
լրացված դիմումի օրինակելի ձևը



Հ Ի Շ Ե Ց ՈՒ Մ

Կառուցապատողը (դիմումատուն) իր հայեցողությամբ կարող է դիմումը ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ «www.e-permits.am» շինարարության թույլտվությունների ստացման առցանց համակարգով:

Դիմումին կցվում են

- ✓ Ֆիզիկական անձի պարագայում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճենը), իսկ կառուցապատողի փոխարեն որպես օրինական ներկայացուցիչ հանդես գալու պարագայում՝ նաև համապատասխան լիազորագրի կրկնօրինակը:
- ✓ Եթե կառուցված օբյեկտին անհրաժեշտ է տրամադրել նաև փոստային առաքման նոր հասցե (հիմք՝ ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշում), ապա Ընդունող հանձնաժողովի կազմում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան անդամի թեկնածությունը ստանալու դիմումին կառուցապատողը պետք է կցի նաև հասցե տրամադրելու ծառայության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նախատեսված տեղական վճարի անդորրագիրը (կամ անդորրագրերը):

Ծանոթանալ հասցե տրամադրելու ծառայության համար
սահմանված տեղական վճարի դրույքաչափերին



Ծ Ա Ն Ո Ւ Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն


Հասցե տրամադրելու ծառայության համար սահմանված տեղական վճարն անհրաժեշտ է փոխանցել Երևանի քաղաքապետարանի 900015211452 հաշվեհամարին:

Դիմումի քննարկման ժամկետը

- ✓ Հանձնաժողովի անդամի թեկնածության առաջարկը կառուցապատողը ստանում է.

դիմումը մուտքագրելու օրվանից

5-օրյա ժամկետում



Ընդունող հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվեն հետևյալ սուբյեկտներն ու շահագրգիռ կողմերը

1 Կառուցապատողը կամ նրա օրինական ներկայացուցիչը, ով հանդիսանում է Ընդունող հանձնաժողովի նախագահը:

Ընդ որում, եթե շինարարության թույլտվությամբ առկա են համակառուցապատողներ կամ գրանցված անշարժ գույքն (հողամասը կամ տարածքը) ունի համասեփականատերեր, ապա վերջիններս նույնպես ներգրավվում են Ընդունող հանձնաժողովի կազմում, որպես հանձնաժողովի անդամներ:

2 Շինարարությունն իրականացրած գլխավոր կապալառու և ենթակապալառու (եթե այդպիսին առկա է) կազմակերպությունների ներկայացուցիչները:

3 Տեխնիկական հսկողություն իրականացնողի ներկայացուցիչը,

բացառությամբ միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող այն օբյեկտների, որոնց տեխնիկական հսկողությունը «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված օբյեկտների համար կարող է փոխարինվել շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպության երաշխավորագրով, ուստի, Ընդունող հանձնաժողովի կազմում այդ գործառույթն իրականացնում է կապալառու կազմակերպության ներկայացուցիչը:

Հ Ի Շ Ե Ց ՈՒ Մ

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների համաձայն, առանց կապալառու կազմակերպության և (կամ) շինարարության որակի նկատմամբ տեխնիկական հսկողի ներգրավման կառուցապատողը կարող է իրականացնել միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող հետևյալ օբյեկտների շինարարությունը.

- ✓ համապատասխան նպատակի համար նախատեսված հողամասի տարածքում ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփականատիրոջ կողմից կառուցվող, 300 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող մինչև երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տների կառուցում,
- ✓ հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով նախատեսված օբյեկտների կառուցում,
- ✓ 150 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող օժանդակ շինությունների կառուցում,
- ✓ 50 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ավտոտնակների կառուցում,
- ✓ 1000 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ջերմոցների կառուցում,
- ✓ 500 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունների կառուցում,
- ✓ 100 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունների կառուցում:

4 Հեղինակային հսկողություն իրականացնողի ներկայացուցիչը:

5 ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության ներկայացուցիչը,

բացառությամբ միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող և ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփականատիրոջ կողմից կառուցված՝ 300 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող մինչև երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տների:



6 Մատակարար կազմակերպությունների ներկայացուցիչները՝

համաձայն Նախագծման թույլտվությամբ սահմանված պահանջների և/կամ նախագծային փաստաթղթերով հաստատված պայմանների:

Մասնավորապես.

Էլեկտրամատակարարում ապահովողն ու սպասարկողը՝

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ,

Ջրամատակարարում ու ջրահեռացում ապահովողն ու սպասարկողը՝

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ,

Գազամատակարարում ապահովողն ու սպասարկողը՝

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ,

Հեռահաղորդակցության ցանց անցկացրած կազմակերպության

(կամ օպերատորի) ներկայացուցիչը:

Հ Ի Շ Ե Ց ՈՒ Մ

Եթե օբյեկտի վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման կամ գործառնական նշանակության փոփոխության դեպքերում չի առաջանում ինժեներական ենթակառուցվածքի նոր ծառայությունների մատուցման կամ մատուցվող ծառայությունների փոփոխության անհրաժեշտություն, ապա այդ մատակարար կազմակերպության ներկայացուցիչն ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկելու հարկ չկա:

7 Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչը:

Ընդունող հանձնաժողովի կազմում ստորև թվարկվող դեպքերում կառուցապատողը պետք է լրացուցիչ ընդգրկի նաև հետևյալ շահագրգիռ պետական մարմիններն ու սուբյեկտները

ՀՀ ԱԻ նախարարության Հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության ներկայացուցիչ,


եթե շահագործման է հանձնվում

- ✓ բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) և բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտը,
- ✓ բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքը՝ անկախ ռիսկայնության աստիճանից,
- ✓ ՀՀ օրենսդրությամբ արտադրական վտանգավոր օբյեկտ համարվող շենքը կամ շինությունը (օրինակ, հեղուկ վառելիքի կամ բնական գազի լիցքավորման կայաններ, այնպիսի արտադրական տարածքներ կամ պահեստարաններ, որտեղ արտադրվում, վերամշակվում, օգտագործվում կամ պահպանվում են ՀՀ օրենսդրությամբ հաստատված, սահմանաքանակները գերազանցող վնասակար նյութեր, ինչպես նաև համանման այլ օբյեկտներ):

Տ Ա Ն Ո Ւ Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Եթե շահագործման հանձնվող կառույցում առկա են ՀՀ օրենսդրությամբ արտադրական վտանգավոր օբյեկտ համարվող տեխնոլոգիական սարքավորումներ (մասնավորապես՝ շարժասանդուղքներ, ճոպանուղիներ, կարուսելներ, ամբարձիչ սարքավորումներ ու մեխանիզմներ կամ վերելակներ), ապա Ընդունող հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվի նաև այն տեղադրած ու մոնիթինգավորվող կամ սուբյեկտները (եթե, այն չի իրականացվել շինարարություն կատարած գլխավոր կապալառուի կողմից): Ընդ որում, Ընդունող հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման շրջանակում կառուցապատողը պետք է յուրաքանչյուր արտադրական վտանգավոր օբյեկտի համար ապահովի ՀՀ օրենսդրությամբ պահանջվող համապատասխան պետական գրանցումը և այն շահագործման ենթակա լինելու մասին տրամադրված Տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացությունը:

Նշված՝ պետական գրանցման ու փորձաքննության գործընթացների կազմակերպման համար կառուցապատողը պետք է դիմի ՀՀ ԱԻ նախարարության «Տեխնիկական անվտանգության փորձաքննության ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:



ՀՀ մշակույթի նախարարության համապատասխան ներկայացուցչին, եթե շահագործման է հանձնվում ՀՀ օրենսդրությամբ պատմության և մշակույթի անշարժ հուշարձան համարվող շենքը կամ շինությունը կամ դրանց պահպանման գոտիների տարածքներում կառուցապատված օբյեկտը:

ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցչին, եթե շահագործման է հանձնվում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կառուցված օբյեկտ, որի արժեքը գերազանցում է գնումների բազային միավորի 250-ապատիկը (այսինքն՝ 250,0 մլն. ՀՀ դրամը):

Ընդ որում, ՀՀ պետական բյուջեի (այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների Ավարտական ակտի ձևակերպման պարտադիր հիմք են հանդիսանում ծրագիրն իրականացնող պետական հիմնարկի կատարած աշխատանքները ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերին համապատասխանելու վերաբերյալ եզրակացությունը և Ընդունող հանձնաժողովի ակտը:

Ներբեռնել ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի ձևաթուղթը (Ձև 3-2-1)



ՔԱՅԼ II.

Ձևավորված Ընդունող հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում

ա) Ընդունող հանձնաժողովը ձևավորում և ղեկավարում է կառուցապատողը.

Բացառությամբ հատկապես վրանգավոր և տեխնիկապես բարդ կամ երկու և ավելի պետությունների շահերին առնչվող՝ բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների, որոնց շինարարական կապալի պայմանագրով կատարված աշխատանքի արդյունքն ընդունվում է ՀՀ կառավարության որոշմամբ սրբեղծված ընդունող հանձնաժողովի կողմից:

բ) Ընդունող հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է կառուցապատողի հաշվին:

գ) Ավարտված շինարարական օբյեկտի՝ հաստատված Նախագծային փաստաթղթերին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստվում է Ընդունող հանձնաժողովի ակտով (այսուհետ՝ Ընդունող հանձնաժողովի ակտ) և հիմնավորվում է Կատարողական փաստաթղթերով կամ կառուցված օբյեկտի Տեխնիկական վիճակի (մասնավորապես՝ շահագործման ենթակա լինելու) մասին համապատասխան հետազննության դրական եզրակացությունով:

Հ Ի Շ Ե Ց ՈՒ Մ

«գ)» կետում նշված աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ է իմանալ, որ.

✓ Կատարողական փաստաթղթերի փաթեթը (որի կազմը և ձևերը սահմանվում են ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից) կազմում է շինարարություն իրականացնող կապալառուն՝ տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

Ընդ որում, շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարողական փաստաթղթերը (ակտերը) և շինարարության վարման մատյանը պահպանվում են կառուցապատողի մոտ, և ընդունող հանձնաժողովի անդամներն ըստ անհրաժեշտության կարող են ուսումնասիրել դրանք՝ պահանջելով կառուցապատողից:



✓ Տեխնիկական հետազննության դրական եզրակացությունը կառուցապատողը կարող է պատվիրել այն սուբյեկտից, որը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների համաձայն, ունի այդպիսի գործունեություն իրականացնելու իրավունք (լիցենզիա):

Ընդ որում, նշված եզրակացությունը կառուցապատողն իր միջոցների հաշվին պետք է ներկայացնի հետևյալ դեպքերում.

1. եթե բացակայում են Կատարողական փաստաթղթերը կամ դրանց մի մասը,
2. եթե կապալառուն որևէ հիմքով (մասնավորապես՝ սնանկություն, գործադիր մարմնի կալանավորում կամ բացակայություն, կառուցապատողի դեմ դատական վեճերի առկայություն) ընդգրկված չէ Ընդունող հանձնաժողովի կազմում,
3. եթե Ընդունող հանձնաժողովի կազմում որևէ պարճառով ընդգրկված չեն կապալառու կազմակերպությունը կամ տեխնիկական հսկողը,
4. եթե միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող և ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփականատիրոջ կողմից կառուցված, 300 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող մինչև երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տունը կառուցվել է առանց շինարարության իրականացման (կապալառու կազմակերպություն) լիցենզիա և (կամ) շինարարական որակի տեխնիկական հսկողության լիցենզիա ունեցող անձանց ներգրավման (այսինքն, Ընդունող հանձնաժողովի այդ անդամներից որևէ մեկը փաստացի չի կարող ընդգրկվել հանձնաժողովում),
5. եթե միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող և ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփականատիրոջ կողմից կառուցված, 300 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող, մինչև երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տան Ընդունող հանձնաժողովի կազմում ներգրավված չէ ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության ներկայացուցիչը:

Վերը թվարկված 4)-րդ և 5)-րդ կետերում նշված օբյեկտների համար Տեխնիկական հետազննության դրական եզրակացության փոխարեն կառուցապատողը կարող է նաև ներկայացնել այդ օբյեկտի հեղինակային հսկողություն իրականացնողի կողմից տրամադրված գրավոր երաշխավորագիր, որով կհավաստվի կառուցված օբյեկտի շահագործման ենթակա լինելու փաստը:


դ) Ընդունող հանձնաժողովի ակտը պետք է ստորագրված ու կնքված (եթե առկա է կնիք) լինի հանձնաժողովի բոլոր անդամների կողմից, որոնցից յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում պատասխանատվություն է կրում հանձնաժողովի կողմից ընդունված որոշման համար՝ օրենքով սահմանված կարգով:

Հ Ի Շ Ե Ց ՈՒ Մ

■ ՀՀ Քաղաքաշինական պետական տեսչության և շահագրգիռ պետական այլ մարմինների՝ Ընդունող հանձնաժողովի աշխատանքին մասնակցությունը համարվում է այդ մարմինների կողմից օրենքով իրենց լիազորությունների սահմաններում կատարված, ավարտված շինարարական օբյեկտի վերջնական ստուգում:

Ընդ որում, ընդունող հանձնաժողովի ակտն ստորագրվելուց հետո այդ օբյեկտում տվյալ շինարարությանը վերաբերող այլ ստուգումներ չեն կարող իրականացվել՝ բացառությամբ ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության գործառույթների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ ավարտական արձանագրություն կազմելու դեպքի:

■ Մատակարար կազմակերպությունների կողմից Ընդունող հանձնաժողովի ակտի ստորագրումը հիմք է այդ կազմակերպությունների կողմից համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու համար:



Ե) Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկված՝ ՀՀ Քաղաքաշինական պետական տեսչության, շահագրգիռ պետական այլ մարմինների և մատակարար կազմակերպությունների ներկայացուցիչները ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում տալիս են եզրակացություն՝ ստորագրելով ընդունող հանձնաժողովի ակտը, հավաստելով ավարտված շինարարական աշխատանքների համապատասխանությունը հաստատված Նախագծային փաստաթղթերին ու տրամադրված տեխնիկական պայմաններին: Այն ենթակա է իրականացման սույն ուղեցույցի ՔԱՅԼ I-ում նշված՝ դիմումն ստանալու օրվանից հետևյալ ժամկետներում.

II և III	ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝	3-օրյա ժամկետում
IV և V	ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝	5-օրյա ժամկետում

Եթե, նշված ժամկետներում հանձնաժողովի համապատասխան անդամը չի ստորագրում Ընդունող հանձնաժողովի ակտը,

սպա սահմանված նույն ժամկետում պարտավոր է կառուցապատողին տրամադրել իր իրավասության սահմաններում արված դիտողությունները՝ նշելով արձանագրված թերությունները, որոնք պետք է վերացվեն շինարարական կապալի պայմանագրով սահմանված ժամկետում, այլապես օբյեկտը հանձնաժողովի կողմից չի ընդունվում:

Նշված թերությունները վերացնելու պարագայում

կառուցապատողը կարող է կրկին դիմել Ընդունող հանձնաժողովի համապատասխան ներկայացուցչին (այսինքն՝ այդ մարմնին), որը եռօրյա ժամկետում պետք է տա իր եզրակացությունն ու ստորագրի հանձնաժողովի ակտը:

ՔԱՅԼ III.

Ավարտական ակտի (Շահագործման թույլտվության) ձևակերպում

Ընդունող հանձնաժողովի ակտն ստորագրվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում անհրաժեշտ է Երևանի քաղաքապետարանի «Մեկ պատուհան» գրասենյակ մուտքագրել ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման N5 հավելվածով հաստատված N3-3-1 ձևաթղթով լրացված Ավարտական ակտը ձևակերպելու դիմում:

Ներբեռնել դիմումի ձևաթուղթը և լրացված դիմումի օրինակելի ձևը



Հ Ի Շ Ե Ց ՈՒ Մ

Կառուցապատողը (դիմումատուին) իր հայեցողությամբ կարող է Ավարտական ակտի և Շահագործման թույլտվության ձևակերպման դիմումը ներկայացնել «www.e-permits.am» շինարարության թույլտվությունների ստացման առցանց համակարգով.

Դիմումին կցվում են

- ✓ Ընդունող հանձնաժողովի ակտը,
- ✓ Կատարողական փաստաթղթերի ցանկը կամ շինությունը շահագործման ենթակա լինելու վերաբերյալ համապատասխան Տեխնիկական հետազննության դրական եզրակացությունը,
- ✓ Ավարտական ակտի և Շահագործման թույլտվության տրամադրման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով առանձին-առանձին վճարումների անդորրագրերի բնօրինակները:



Հ Ի Շ Ե Ց ՈՒ Մ

- ❖ Ավարտական ակտի և Շահագործման թույլտվության համար համապատասխան տեղական վճարները սահմանվում են Երևան քաղաքի ավագանու 26.12.2017թ. N89-Ն որոշմամբ, որոնք, ըստ օբյեկտի կառուցապատման ընդհանուր մակերեսի և գտնվելու տարածագնահատման գոտու (մասնավորապես՝ Երևանում առկա են 1-9-րդ գոտիները), փոփոխական են:
- ❖ Անհրաժեշտ տեղական վճարները պետք է կատարվեն կառուցապատողի կողմից կամ նրա լիազորած անձի կողմից՝ իր անվամբ և յուրաքանչյուր վճարման անդորրագրում պետք է ճիշտ նշված լինի կառուցապատված օբյեկտի հասցեն ու վճարման նպատակը (**օրինակ, Արգիշտիի 1 հասցեի Ավարտական ակտի համար կամ Արգիշտիի 1 հասցեի Շահագործման թույլտվության համար**):
- ❖ Անհրաժեշտ տեղական վճարները պետք է փոխանցվեն կառուցված օբյեկտի գտնվելու վայրի՝ Երևան քաղաքի վարչական շրջանի ստորև նշված համապատասխան հաշվեհամարներին՝


ԱԶԱՓՆՅԱԿ	900055313382
ԱՎԱՆ	900035495119
ԱՐԱԲԿԻՐ	900035311209
ԴԱՎԹԱՇԵՆ	900055314257
ԷՐԵՐՈՒՆԻ	900025311540
ԿԵՆՏՐՈՆ	900015213185
ՄԱՆԱԹԻԱ-ՍԵՐԱՍՏԻԱ	900055040225
ՆՈՐ ՆՈՐՔ	900035050328
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ	900015221311
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	900025312373
ՇԵՆԳԱՎԻԹ	900025100588
ՔԱՆԱՔԵՌ-ՁԵՅԹՈՒՆ	900035500033

ՔԱՅԼ III-ում նշված Ավարտական ակտի քննարկման դիմումի ժամկետները

դիմումի ընդունման օրվանից՝


II և III	կատեգորիայի օբյեկտների համար	3-օրյա ժամկետում
IV և V	կատեգորիայի օբյեկտների համար	5-օրյա ժամկետում

Գործընթացի դրական ելքի պարագայում
Երևանի քաղաքապետարանի
«Մեկ պատուհան» գրասենյակից դիմումատուն ստանում է
**ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ)**
երկու օրինակները



Ծ Ա Ն Ո Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կառուցապատման թույլտվությունների տրամադրման համար օրենքով և սույն ուղեցույցով նախատեսված ժամկետներում Երևանի քաղաքապետարանը կառուցապատողին պատշաճ ձևով ծանուցում է ձևակերպված Ավարտական ակտի (Շահագործման թույլտվության) վերաբերյալ որոշման ընդունման մասին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:



Ավարտական ակտը (Շահագործման թույլտվությունը) հիմք է

կառուցված օբյեկտի և դրա կազմում ստորաբաժանված միավորների նկատմամբ գույքային իրավունքների գրանցման կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ տվյալ օբյեկտի շահագործման իրավունքի ամրագրված սահմանափակումը դադարեցնելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

❖ Ձմռան ամիսներին ձևակերպվող Ավարտական ակտով կարող է նախատեսվել շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքները մոտակա գարնանային-ամառային ամիսներին իրականացնելու վերաբերյալ պայման: Այդ աշխատանքներն ավարտվում են Ավարտական ակտով սահմանված ժամկետում և ընդունվում կառուցապատողի կողմից՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի մասնակցությամբ:

❖ Առևտրային իրացման նպատակով կառուցվող անհատական բնակելի (այդ թվում՝ բլոկացված) տների և դրանց կից տնտեսական շինությունների ներքին հարդարման շինարարական աշխատանքների ոչ լրիվ իրականացման դեպքում Ավարտական ակտը ձևակերպելուց հետո շինարարության թույլտվություն չպահանջող ներքին հարդարման աշխատանքները կարող են կատարվել նոր սեփականատիրոջ կողմից: Ընդ որում, դրանք չեն կարող առնչվել ընդհանուր օգտագործման տարածքների ներքին հարդարման, կանաչապատման, ինչպես նաև ինժեներատեխնոլոգիական սարքավորումների մոնտաժման և գործարկման աշխատանքներին:

❖ Ավարտական ակտը կարող է նաև ձևակերպվել **ոչ էական շեղումներով** կառուցված լինելու դեպքում, որը կարող է հիմնավորվել կառուցված օբյեկտի չափագրության հիման վրա՝ այն չափագրող սուբյեկտի կողմից տրված մասնագիտական եզրակացությամբ: Այս առումով, ոչ էական են համարվում՝

- յուրաքանչյուր հարկի մակերեսի՝ մինչև 5 տոկոսի չափով շեղումը,
- կառույցի բարձրության՝ մինչև 1.2 մետր չափով համամասնական (ըստ հարկերի) շեղումը,
- ներքին միջնորմների և այլ ոչ կառուցվածքային տարրերի տեղադիրքի շեղումները՝ շենքերի հարաչափերի նվազագույն նորմերը պահպանելու պայմանով:

Թվարկված երեք պայմաններին համապատասխանող շեղումները կհամարվեն ոչ էական, եթե

- 1) չեն փոփոխվել հաստատված Նախագծային փաստաթղթերով նախատեսված՝
 - օբյեկտի հարկայնությունը,
 - օբյեկտի տեղադրման կարմիր և կառուցապատման գծերը,
 - կառուցապատվող հողամասի սահմանները:

2) օբյեկտի կոնստրուկտիվ տարրերին չառնչվող ճարտարապետական արտահայտչամիջոցների (ճակատների, բարձրաքանդակների, ինտերիերի նկարվածք և այլն, եթե այդ շեղումները չեն հակասում քաղաքաշինական կանոնադրության պահանջներին) փոփոխման դեպքում առկա է նախագծող հեղինակի համաձայնությունը,

3) 2-րդ կետով սահմանված փոփոխությունները կատարվել են 1-ին կետի պահանջների իրականացման ապահովմամբ:

Ավարտական ակտի ձևակերպումը կարող է մերժվել, եթե

չի ներկայացվել ՔԱՅԼ III-ում նշված՝ դիմումին կից պահանջվող որևէ փաստաթուղթ:

Կրկնակի դիմում ներկայացնելու դեպքում

- ✓ անհրաժեշտ է ապահովել մերժված դիմումով նախատեսված պայմանների կատարումը և սույն ուղեցույցում նշված ընթացակարգով Երևանի քաղաքապետարանի «Մեկ Պատուհան» գրասենյակ ներկայացնել նոր դիմում:
- ✓ Երևանի քաղաքապետարանը կրկնակի դիմումը քննարկում և կառուցապատողին է տրամադրում ձևակերպված Ավարտական ակտի (Շահագործման թույլտվության) երկու օրինակները

դիմումը մուտքագրելու օրվանից

3-օրյա ժամկետում



ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆՎԱԾ ՇԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործընթացը կարգավորվում է
ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման
Հավելված N1-ով հաստատված կարգի 173-198 կետերով

Կառուցվող (այդ թվում՝ վերակառուցվող, վերականգնվող, ուժեղացվող, արդիականացվող, ընդլայնվող) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի շինարարական աշխատանքների ավարտը կառուցապատողի հայեցողությամբ փաստագրվում է առանձին **Ավարտական ակտով**։ Նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող բոլոր շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացվելուց և կապալառուի կողմից ավարտված շինարարական օբյեկտը կառուցապատողին հանձնելուց և կառուցապատողի կողմից այն ընդունվելուց հետո։

Ընդ որում.

- ✓ Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ավարտական ակտի ձևակերպման ժամանակ բոլոր կողաճակատների բացվածքներում պետք է տեղադրված լինեն պապուհանները կամ ապակեպատ ցուցափեղկերը, իսկ պատերի արտաքին մակերևույթի ծածկույթն ամբողջությամբ իրականացված լինի ըստ նախագծի, մասնավորապես, երեսապատումը կամ բարձրորակ սվաղի իրականացումը կամ հարդարման այլ աշխատանքները։
- ✓ Կառուցման ավարտի գրանցում չունեցող այն բազմաբնակարան շենքերը, որոնց ստորաբաժանված միավորներն առանձին վկայականներով գրանցված են որպես 100 տոկոսից ցածր ավարտվածություն ունեցող անավարտ շինություններ, կառուցման ավարտի գրանցման նպատակներով Ավարտական ակտի ձևակերպման համար նախատեսված կառուցապատողի գործառույթներն իրականացնում է սեփականատերերի կողմից ընտրված կազմակերպությունը կամ համայնքի ղեկավարի կողմից վերապահված՝ համայնքում այլ բազմաբնակարան շենքի կառավարման մարմինը՝ սեփականատերերի ծախսերով։


Ընդունող հանձնաժողովի ձևավորման, այդ աշխատանքների կազմակերպման ու առանձին Ավարտական ակտի ձևակերպման գործընթացները հիմնականում համընկնում են սույն ուղեցույցի ՔԱՅԼ I-ից ՔԱՅԼ III-ում նկարագրված ընթացակարգին, բացառությամբ ստորև նշվող պայմանների.

Ներբեռնել Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի թեկնածությունն ստանալու դիմումի ձևաթուղթը և լրացված դիմումի օրինակելի ձևը



Ներբեռնել ավարտված շինարարական օբյեկտը Շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի ձևաթուղթը (Ձև 3-2-2)

1. ընդունող հանձնաժողովի կազմում չեն ընդգրկվում մատակարար կազմակերպությունների և ինժեներական կամ տեխնոլոգիական սարքավորումներ տեղադրած (մոնտաժած) սուբյեկտների ներկայացուցիչները,



2. ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկված՝ ՀՀ Քաղաքաշինական պետական տեսչության և շահագրգիռ պետական այլ մարմինների ներկայացուցիչները ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում տալիս են եզրակացություն՝ ստորագրելով ընդունող հանձնաժողովի ակտը՝ հավաստելով ավարտված շինարարական աշխատանքների համապատասխանությունը հաստատված Նախագծային փաստաթղթերին ու տրամադրված տեխնիկական պայմաններին՝ **սույն ուղեցույցի ՔԱՅԼ I-ում նշված՝**

դիմումն ստանալու օրվանից


10-օրյա ժամկետում

3. ՔԱՅԼ III-ում նշված դիմումին կից պահանջվող փաստաթղթերից կառուցապատողը չի ներկայացնում միայն Շահագործման թույլտվության ձևակերպման համար սահմանված դրույքաչափերով վճարման ենթակա տեղական վճարի անդորրագիրը, որը ենթակա է վճարման հետագայում՝ այդ գործընթացի կազմակերպման շրջանակում,
4. առանձին Ավարտական ակտի ձևակերպումը կամ մերժումը Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվում է

դիմումը մուտքագրելու օրվանից

5-օրյա ժամկետում

Ներբեռնել Ավարտական ակտի ձևակերպման դիմումի ձևաթուղթը (Ձև 3-3-2)



**Գործընթացի դրական ելքի պարագայում
Երևանի քաղաքապետարանի
«Մեկ պատուհան» գրասենյակից դիմումատուն
ստանում է ձևակերպված
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ
երկու օրինակները**

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Կառուցապատման թույլտվությունների տրամադրման համար օրենքով և սույն ուղեցույցով նախատեսված ժամկետներում Երևանի քաղաքապետարանը կառուցապատողին պատշաճ ձևով ծանուցում է Ավարտական ակտի ընդունման մասին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

**Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի համար
առանձին ձևակերպված Ավարտական ակտը հիմք է**

կառուցված օբյեկտի և դրա կազմում ստորաբաժանված գույքային միավորների (բնակարաններ կամ ոչ բնակելի տարածքներ) նկատմամբ գույքային իրավունքների գրանցման համար՝ **առանց շահագործման իրավունքի:**



ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆՎԱԾ ՇԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁԻՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործընթացը կարգավորվում է
ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման
Հավելված N1-ով հաստատված կարգի 173-198 կետերով

Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի՝ ըստ գործառնական նշանակության շինարարության շահագործման փաստագրումը ձևակերպվում է առանձին **Շահագործման թույլտվությամբ՝** օբյեկտի Նախագծային փաստաթղթերով նախատեսված ինժեներական ենթակառուցվածքների (մասնավորապես, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման ու ջրահեռացման, գազամատակարարման, հեռահաղորդակցության ցանցերի անցկացման), ինժեներատեխնոլոգիական սարքավորումների մոնտաժման ու գործարկման (ըստ Նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերի՝ համապատասխան վերելակների կամ օդափոխության կամ այլ սարքավորումների տեղադրման) աշխատանքները, շենքի ծավալի ներսում գտնվող ընդհանուր օգտագործման տարածքների ներքին հարդարումը, տարածքի կանաչապատումը և բարեկարգումն ավարտված լինելուց հետո:

Ընդ որում.

- ✓ Կառուցապատողի ցանկությամբ շինարարական համալիրի կազմում ընդգրկված յուրաքանչյուր առանձին բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի համար Շահագործման թույլտվությունը կարող է տրամադրվել ըստ դրա համապատասխան աշխատանքների ավարտի:
- ✓ Ձմռան ամիսներին տրամադրվող Շահագործման թույլտվությամբ կարող է նախատեսվել շինարարության թույլտվություն չպահանջող, կառուցված օբյեկտի՝ բացառապես արտաքին հարակից տարածքների բարեկարգման աշխատանքները մոտակա գարնանային-ամառային ամիսներին իրականացնելու վերաբերյալ պայման: Այդ աշխատանքներն ավարտվում են տրամադրվող Շահագործման թույլտվությամբ սահմանված ժամկետում և ընդունվում Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի մասնակցությամբ:

Առանձին Շահագործման թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ հաջորդական քայլերը

Քայլ 1.

Անհրաժեշտ մասնագիտական դրական եզրակացությունների ապահովում.

ա) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ավարտված շինարարական օբյեկտի՝ հաստատված նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստվում է ստորև նշվող սուբյեկտներից յուրաքանչյուրի կողմից առանձին տրված դրական եզրակացություններով, մասնավորապես.

✓ մատակարար կազմակերպություններ

համաձայն Նախագծման թույլտվությամբ սահմանված պահանջների և/կամ նախագծային փաստաթղթերով հաստատված պայմանների,


այդ թվում՝

էլեկտրամատակարարում ապահովողն ու պասարկողը՝
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ,

Ջրամատակարարում ու ջրահեռացում ապահովողն ու սպասարկողը՝
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ,

Գազամատակարարում ապահովողն ու սպասարկողը՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ,

Հեռահաղորդակցության ցանց անցկացրած կազմակերպության
(կամ օպերատորի) ներկայացուցիչը,



Հ Ի Շ Ե Ց ՈՒ Մ

- ❖ Ինժեներական ենթակառուցվածքների՝ մոնտաժված և գործարկված լինելու մասին համապատասխան մասնագիտական դրական եզրակացությունները մատակարար կազմակերպությունները պարտավոր են տրամադրել կառուցապատողի դիմումն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:
- ❖ Մատակարար կազմակերպությունների կողմից դրական եզրակացություններ տրամադրելը հիմք է այդ կազմակերպությունների կողմից համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելու համար:

✓ Ինժեներատեխնոլոգիական սարքավորումների մոնտաժման և գործարկման աշխատանքների փորձարկումն իրականացրած կազմակերպություններ, այդ թվում՝

- վերելակներ, շարժասանդուղքներ և համանման այլ սարքեր,
- օդափոխության կամ ջերմամաքակարարման սարքավորումներ,
- բազմաբնակարան շենքի շահագործման ու կենսապահովման համար, ըստ Նախագծային փաստաթղթերի նախատեսված, այլ տեխնոլոգիական սարքավորումներ,

բ) Եզրակացությունների և համապատասխան փորձարկումների փաթեթները կազմում է կառուցապատողը: Այն բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերը, որոնց ստորաբաժանված գույքային միավորները (բնակարաններ կամ ոչ բնակելի տարածքներ) առանձին վկայականներով գրանցված են որպես սեփականության իրավունքի օբյեկտներ, Շահագործման թույլտվություն ստանալու նպատակով նախատեսված գործառնությունները կառուցապատողի փոխարեն կարող է իրականացնել նաև սեփականատերերի կողմից ընտրված կազմակերպությունը (կամ բազմաբնակարան շենքի կառավարման մարմինը)՝ սեփականատերերի ծախսերով:

Քայլ 2.

Առանձին Շահագործման թույլտվության տրամադրում

Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի Շահագործման թույլտվություն տրամադրելու նպատակով անհրաժեշտ է Երևանի քաղաքապետարանի «Մեկ պատուհան» գրասենյակ մուտքագրել ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման N5 հավելվածով հաստատված N3-3-3 ձևաթղթով լրացված դիմում:

Ներբեռնել դիմումի ձևաթուղթը և լրացված դիմումի օրինակելի ձևը



Հ Ի Շ Ե Ց ՈՒ Մ

Կառուցապատողը (դիմումատուն) իր հայեցողությամբ կարող է առանձին Շահագործման թույլտվության ձևակերպման դիմումը ներկայացնել «www.e-permits.am» շինարարության թույլտվությունների ստացման առցանց համակարգով:



Դիմումին կցվում են


- ✓ մատակարար կազմակերպությունների մասնագիտական դրական եզրակացությունները,
- ✓ ինժեներատեխնոլոգիական սարքավորումների մոնտաժման և գործարկման աշխատանքների փորձարկումն իրականացրած կազմակերպությունների դրական եզրակացությունները,
- ✓ կառուցապատողի կամ նրա իրավահաջորդի գրավոր հայտարարությունը՝ շինարարական օբյեկտը շահագործման պատրաստ լինելու վերաբերյալ,
- ✓ շահագործման թույլտվության տրամադրման համար՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կատարված վճարման անդորրագրի բնօրինակը,
- ✓ ֆիզիկական անձի պարագայում սույն դիմումին անհրաժեշտ է կցել դիմողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը (իրավաբանական անձի պարագայում՝ պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճենը), իսկ կառուցապատողի փոխարեն օրինական ներկայացուցչի հանդես գալու պարագայում՝ նաև համապատասխան լիազորագրի կրկնօրինակը:

Շահագործման թույլտվության դիմումի քննարկման ժամկետը

Քայլ 2-ում նշված դիմումը ստանալու օրվանից


3-օրյա ժամկետում:

Գործընթացի դրական ելքից հետո
Երևանի քաղաքապետարանի
«Մեկ պատուհան» գրասենյակից դիմումատուին են
տրամադրվում ձևակերպված
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
երկու օրինակները



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Կառուցապատման թույլտվությունների տրամադրման համար օրենքով և սույն ուղեցույցով նախատեսված ժամկետներում Երևանի քաղաքապետարանը կառուցապատողին պատշաճ ձևով ծանուցում է Շահագործման թույլտվության վերաբերյալ որոշման ընդունման մասին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:



Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի համար Շահագործման թույլտվությունը հիմք է

կառուցված օբյեկտի շահագործման իրավունքի ամրագրված սահմանափակումը
դադարեցնելու, այսինքն՝ այն լիարժեք շահագործելու համար:

Շահագործման թույլտվության ձևակերպումը կարող է մերժվել

Եթե չի ներկայացվել Քայլ 2-ում նշված դիմումին կից որևէ փաստաթուղթ:

Ընդ որում,

բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի առանձնացված գույքային
միավորների (բնակարաններ կամ ոչ բնակելի տարածքներ) ներքին հարդարման
շինարարական աշխատանքների ոչ լրիվ իրականացումը Շահագործման
թույլտվության տրամադրման մերժման հիմք չէ՝ բացառությամբ ընդհանուր
օգտագործման տարածքների ներքին հարդարման, կանաչապատման
աշխատանքների, փոստային բաժանորդային պահարանների տեղադրման ու
ինժեներափոխադրողական սարքավորումների մոնտաժման և գործարկման
աշխատանքների, որոնք պետք է պարտադիր կերպով իրականացված լինեն
ամբողջությամբ:

Կրկնակի դիմումի ներկայացում

- ✓ Կառուցապատողը մերժված դիմումով նախատեսված պայմաններն ապահովելու
դեպքում սույն ուղեցույցում նշված ընթացակարգով կարող է Երևանի
քաղաքապետարանի «Մեկ Պատուհան» գրասենյակ ներկայացնել կրկնակի
դիմում:
- ✓ Երևանի քաղաքապետարանը կրկնակի դիմումը քննարկում և կառուցապատողին
է տրամադրում ձևակերպված առանձին Շահագործման թույլտվության երկու
օրինակները՝

դիմումը մուտքագրելու օրվանից

3-օրյա ժամկետում:



ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ



«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք.

**«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»
ՀՀ օրենք.**



ՀՀ կառավարության 19.03.2015թ. «ՀՀ կառուցապարման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշում.

**ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի
«ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում
ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների
անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա
գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման,
հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը
հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին
սահմանելու մասին» N 2387-Ն որոշում.**



**ՀՀ Երևան քաղաքի ավագանու 26.12.2017թ. «Երևան
համայնքում տեղական տնտեսության 2018 թվականի
դրույքաչափերը սահմանելու մասին» N91-Ն որոշում.**

**ՀՀ Երևան քաղաքի ավագանու 26.12.2017թ.
«Երևան համայնքում տեղական վճարի 2018 թվականի
դրույքաչափերը սահմանելու, Երևան քաղաքի ավագանու 2010
թվականի նոյեմբերի 26-ի N159-Ն, 2011 թվականի մայիսի 6-ի
N224-Ն, 2012 թվականի հոկտեմբերի 31-ի N521-Ն և 2013
թվականի դեկտեմբերի 10-ի N90-Ն որոշումներն ուժը կորցրած
ճանաչելու մասին» N 89-Ն որոշում.**



**ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁՆՔ**



**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ**

Տիգրան Բարսեղյան

🏠 Երևանի քաղաքապետարանի
1-ին մասնաշենք՝ Արգիշտի 1
☎ (+374 11) 514 158

- Նախագծման թույլտվության (ըստ անհրաժեշտության նաև տեխնիկական պայմանների) տրամադրում.
- Ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցում և Շինարարության թույլտվության տրամադրում.
- Քանդման կամ Ապամոնտաժման թույլտվության տրամադրում.

**ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Անդրանիկ Քասարյան

🏠 Երևանի քաղաքապետարանի
2-րդ մասնաշենք՝ Փ.Բուզանդի 1/3
☎ (+374 11) 514 616

- Շինարարության թույլտվություն չպահանջող էքսիզային նախագծի համաձայնեցում.
- Շինարարության կամ Քանդման թույլտվության ժամկետի երկարաձգում.

**ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՈՂԻ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Հայկ Ասատրյան

🏠 Երևանի քաղաքապետարանի
2-րդ մասնաշենք՝ Փ.Բուզանդի 1/3
☎ (+374 11) 514 560

- Ավարտական ակտի (Շահագործման թույլտվության) ձևակերպում.
- Շինարարական աշխատանքները սկսելու վերաբերյալ կառուցապատողների կողմից Երևանի քաղաքապետարան ներկայացված իրազեկումների հետագա ընթացքի ապահովում.
- Շինարարության կամ Քանդման թույլտվության ժամկետի երկարաձգում.

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ՂԵԿԱՎԱՐՆԵՐ**

**(Վարչական շրջանի ղեկավարը
կարող է քաղաքաշինական
փաստաթղթեր տրամադրել
միայն համապատասխան
վարչական շրջանի տարածքի
որոշակի գոտիներում գտնվող՝
II կամ III ռիսկայնության
աստիճան ունեցող,
անհատական բնակելի տների
ու դրանց օժանդակ
կառույցների համար)**

- Նախագծման թույլտվության (ըստ անհրաժեշտության, նաև տեխնիկական պայմանների) տրամադրում.
- Ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցում և Շինարարության թույլտվության տրամադրում.
- Քանդման կամ ապամոնտաժման թույլտվության տրամադրում.
- Վարչական շրջանի ղեկավարի կողմից տրված շինարարության կամ քանդման թույլտվության ժամկետի երկարաձգում.
- Անհատական բնակելի տների օժանդակ կառույցներին առնչվող մասնակի վերանորոգման ու հարդարման՝ շինարարության թույլտվություն չպահանջող այլ աշխատանքների ու հարցերի քննարկում:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Աջափնյակ	վարչական շրջանի ղեկավար՝ Արտավազդ Սարգսյան	🏠 Ա. Սարգսյան փողոց 5 ☎ (+374 11) 518 050 ✉ ajapnyak@yerevan.am
Ավան	վարչական շրջանի ղեկավար՝ Սանվել Զավադյան	🏠 Խուդյակովի փողոց 222 ☎ (+374 11) 518 108 ✉ avan@yerevan.am
Արաբկիր	վարչական շրջանի ղեկավար՝ Հովհաննես Վարդանյան	🏠 Ն. Զարյան փողոց 27 ☎ (+374 11) 518 201 ✉ arabkir@yerevan.am
Դավթաշեն	վարչական շրջանի ղեկավար՝ Ռուսլան Բաղդասարյան	🏠 Դավթաշենի 3-րդ թաղ., վարչական շենք ☎ (+374 11) 518 282 ✉ davtashen@yerevan.am
Էրեբունի	վարչական շրջանի ղեկավար՝ Դավիթ Գրիգորյան	🏠 Սասունցի Դավթի փողոց 87 ☎ (+374 11) 518 331 ✉ erebouni@yerevan.am
Կենտրոն	վարչական շրջանի ղեկավար՝ Արա Սարգսյան	🏠 Տերյան փողոց 44 ☎ (+374 11) 518 401 ✉ kentron@yerevan.am
Մալաթիա-Սեբաստիա	վարչական շրջանի ղեկավար՝ Արտակ Ալեքսանյան	🏠 Սեբաստիայի փողոց 32 ☎ (+374 11) 518 585 ✉ malatia_sebastia@yerevan.am
Նոր Նորք	վարչական շրջանի ղեկավար՝ Արմեն Ուլիխանյան	🏠 Գայի պողոտա 19 ☎ (+374 11) 518 688 ✉ nor_norq@yerevan.am
Նորք-Մարաշ	վարչական շրջանի ղեկավար՝ Վաղինակ Մկրտչյան	🏠 Ա.Արմենակյան փողոց 272 ☎ (+374 11) 518 718 ✉ norq_marash@yerevan.am
Նուբարաշեն	վարչական շրջանի ղեկավար՝ Արթուր Կիրակոսյան	🏠 Նուբարաշենի 9-րդ փողոց 4 ☎ (+374 11) 518 730 ✉ nubarashen@yerevan.am
Շենգավիթ	վարչական շրջանի ղեկավար՝ Արմեն Սարգսյան	🏠 Գ. Նժդեհ փողոց 26 ☎ (+374 11) 518 808 ✉ shengavit@yerevan.am
Քանաքեռ-Զեյթուն	վարչական շրջանի ղեկավար՝ Արթուր Ստեփանյան	🏠 Դ.Անհաղթ փողոց 11 ☎ (+374 11) 518 844 ✉ Qanaqer_zeytun@yerevan.am

Երևանի քաղաքապետարանի «Թ Ե Ժ Գ Ի Ծ»



ԹԵԺ ԳԻԾ
1-08 շուրջօրյա
+(374 11) 514 000

Երևանի քաղաքապետարանի թեժ գիծը՝ **+(374 11) 514-000**,
գործում է ամեն օր՝ ժամը **09:00-18:00**


Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության
վարչության պետ, Արմեն Սիմոնյան
098-16-66-61 հեռախոսահամարը գործում է շուրջօրյա

Վարչական շրջանների թեժ գծերի հեռախոսահամարները
գործում են աշխատանքային օրերին՝ ժամը **9:00-ից մինչև 18:00**:

Աջափնյակ վարչական շրջան	+(374 11) 518-111
Ավան վարչական շրջան	+(374 11) 518-008
Արաբկիր վարչական շրջան	+(374 11) 518-188
Դավթաշեն վարչական շրջան	+(374 11) 518-288
Էրեբունի վարչական շրջան	+(374 11) 518-388
Կենտրոն վարչական շրջան	+(374 11) 518-488
Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջան	+(374 11) 518-588
Նոր Նորք վարչական շրջան	+(374 11) 518-688
Նորք - Մարաշ վարչական շրջան	+(374 11) 518-718
Նուբարաշեն վարչական շրջան	+(374 11) 518-738
Շենգավիթ վարչական շրջան	+(374 11) 518-808
Քանաքեռ - Զեյթուն վարչական շրջան	+(374 11) 518-889

ՎԵՈՒԽԱ ՋՈՒՐ	185
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ	180
ԳԱԶԻ ՎԹԱՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	104

ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոն	101, 911, 112, 108
Ոստիկանություն	102
Շտապ բուժօգնության ծառայություն	103
ՍԱՆԻԹԵՔ	8090



ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ
կառուցապատման նպատակով
թույլտվությունների և այլ քաղաքաշինական
փաստաթղթերի տրամադրման ընթացակարգերի

ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱՐԶ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)
տրամադրելու ընթացակարգ (փուլ)

ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱՐԶ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ
մշակելու, հաստատելու և համաձայնեցնելու
և ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
(ներառյալ ՔԱՆԴՄԱՆ կամ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ)
ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ
տրամադրելու ընթացակարգ (փուլ)

ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱՐԶ

ՔԱՆԴՄԱՆ ԿԱՄ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ
ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ
տրամադրելու ընթացակարգ
(ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ)

ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱՐԶ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿՍԵԼՈՒ ԻՐԱԶԵԿՄԱՆ
ընթացակարգ

ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ
կառուցապատման նպատակով
թույլտվությունների և այլ քաղաքաշինական
փաստաթղթերի տրամադրման ընթացակարգերի

ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՄԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԶԻ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ
(ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ)
ձևակերպման ընթացակարգ (փուլ)

ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՄԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԶԻ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
(Ներառյալ ՔԱՆԴՄԱՆ կամ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ)
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
Ժամկետի երկարաձգման ընթացակարգ

ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՄԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԶԻ

Շինարարության թույլտվություն չպահանջող որոշակի
աշխատանքների իրականացման համար
ԷՍՔԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ
և վարչական շրջանների ղեկավարների կողմից
համանման որոշ աշխատանքների քննարկման ընթացակարգեր

Վերը նշված քաղաքաշինական փաստաթղթերի
տրամադրման ընթացակարգերի յուրաքանչյուր
ՈՒՂԵՑՈՒՅՑԻ էլեկտրոնային տարբերակին կարելի է ծանոթանալ
Երևանի քաղաքապետարանի պաշտոնական՝

www.yerevan.am

կայքի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» և «Doing Business» բաժիններում:





ՀԱՐԳԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ

Կառուցապատման նպատակով համապատասխան թույլտվություններ և այլ քաղաքաշինական փաստաթղթեր տրամադրելու (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով) գործընթացները կարգավորվում են ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի մարտի 19-ին ընդունված N596-Ն որոշմամբ հաստատված ընթացակարգերով:

Սույն ուղեցույցով ներկայացվում է Երևան քաղաքում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով **ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ)** ձևակերպման ընթացակարգը (փուլը):

Ծանոթանալով դրան՝ Դուք կարող եք Երևանի քաղաքապետարանի «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակ մուտքագրել անհրաժեշտ հայտի (կամ դիմումի) ձևաթուղթը՝ դրան կցելով պահանջվող մյուս փաստաթղթերը: Սույն ուղեցույցից կտեղեկանաք նաև համապատասխան թույլտվության տրամադրման ժամկետներին, ինչպես նաև քաղաքաշինական գործունեություն իրականացնելուն առնչվող մի շարք այլ կարևոր տեղեկությունների:

«ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակում դիմումը (կամ հայտը) մուտքագրելիս Ձեզ կտրամադրվի ծանուցման թերթիկ, որտեղ նշված կլինի մուտքագրված դիմումի քննարկման համար սահմանված ժամկետը և թվային ծածկագիրը (բանալին), որի միջոցով Դուք կարող եք Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am պաշտոնական կայքի «Մեկ պատուհան» բաժնից հետևել դիմումի (կամ հայտի) ընթացքին:

Բոլոր փուլերի դրական ելքի պարագայում «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» գրասենյակից Դուք կստանաք անհրաժեշտ թույլտվություններն ու համաձայնեցված նախագիծը և կկարողանաք իրականացնել համապատասխան շինարարական աշխատանքներ:

Քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման ամբողջ ընթացակարգին և դրանց տրամադրման համար անհրաժեշտ դիմումներ (կամ հայտեր) լրացնելու ձևաթղթերին վերաբերող ավելի ընդգրկուն տեղեկություններ կարելի է ստանալ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական՝

www.yerevan.am

կայքի,

«ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» և «Doing Business» բաժիններում տեղադրված համապատասխան ուղեցույցներից

